

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/1

18 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ 17.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕՀՎ 26.09.2014 թ-ի թիվ 1426474 վարչական ակտի դեմ:

«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության կողմից 26.09.2014 թ-ին կազմել է թիվ 1426474 վարչական ակտը (այսուհետ նաև Ակտ): Ակտում արձանագրվել է, որ 2014 թ-ի սեպտեմբերի 22-ին ժամը 12:05 սահմաններում ք.Երևան, Արին Բերդի նրբանցքում իրենց կողմից իրականացվել է «Հ.Ա.Ն.Ս. ՖՈՒԴ» ՍՊԸ-ին պատկանող տրանսպորտային միջոցի առկա իրերի և փաստաթղթերի հետազոտում: Ակտում արձանագրվել է, որ միջոցառման արդյունքում արձանագրվել է, որ տրանսպորտային միջոցում առկա է 3000 կգ հավի բուր, ընդհանուր 1.869.000 դրամի չափով: Ակտում որոշակի փաստերի հաստատման համար հիմք է ընդունվել Ընկերության տնօրենի եղբայր Ն.Սարգսյանի գրավոր հայտարարությունը: Համաձայն Ակտի, առանց ուղեկցող փաստաթղթերի տեղափոխվող ապրանքի վաճառքի գինը որոշվել է երկկողմանի հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված գներով:

Վարչական մարմինը վարչարարությունն իրականացրել է օրենքի կոպիտ խախտումներով, որի արդյունքում խախտվել են գանգատաբերի Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված մի շարք իրավունքներ:

Վարչական ակտում նշվել է, որ Ընկերությանը պատկանող տրանսպորտային միջոցում առկա է 3000 կիլոգրամ հավի բուր, սակայն չի նշվել, թե ինչ հիմքով է վարչական մարմինը տվյալ քանակի ապրանք արձանագրել: Վարչական վարույթում առկա չէ որևէ փաստաթուղթ, որը կփաստի այն հանգամանքը, որ տրանսպորտային միջոցում տվյալ պահին առկա էր 3000 կիլոգրամ թռչնամիս:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածն իմպերատիվ սահմանում է այն պարտավորությունը, որի համաձայն վարչական մարմինը պարտավոր է իրականացնել վարչական վարույթի իրականացման ժամանակ, դրանք են վարույթի բազմակողմանիությունը և օբյեկտիվ քննույթունը:

Վարչական ակտում նշված է, որ Ընկերության տնօրենի հայտարարության համաձայն ապրանքատեսակը ք.Երևան, Վարդաշեն 6 փող. 14/12 հասցեում գտնվող ընկերությանը պատկանող պահեստից տեղափոխվում էր ք.Երևան, Արին Բերդի նրբանցք առանց համապատասխան ուղեկցող փաստաթղթի, սակայն նշված չէ, թե ով է հանդիսանում Ն.Սարգսյանը, արդյոք նա հանդիսանում է Ընկերության պաշտոնատար անձ, թե ոչ:

Վարչական վարույթն օրենքով սահմանված կարգով իրականացնելու դեպքում վարչական մարմինը կփորձեր պարզել Ն.Սարգսյանի ինքնությունը և համապատասխան ձևաչափով վարչական վարույթին մասնակից կդարձնել Ընկերության պաշտոնատար անձանց, որոնք Ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունեն ներկայացնել Ընկերությունը:

Վարչական մարմնի կողմից վարչական վարույթին Ընկերության համապատասխան պաշտոնատար անձանց գործին մասնակից չդարձնելով ի սկզբանե վարչական վարույթն իրականացվել է օրենքների կոպիտ խախտմամբ, այն է Ընկերությունը չի կարողացել մասնակցել վարչական վարույթին և, հետևաբար իր կարծիքը, դիրքորոշումը ներկայացնելու իրավունքը սահմանափակված է եղել:

Վարչական ակտում արձանագրվել է, որ առանց ուղեկցող փաստաթղթերի տեղափոխվող ապրանքի վաճառքի գինը որոշվել է երկկողմանի հաշվարկային

փաստաթղթերով հիմնավորված գներով: Պետք է հայտնել, որ սույն վարչական վարույթում բացակայում է որևէ փաստաթուղթ, որը կհիմնավորեր վերոգրյալ ապրանքի վաճառքի գինը: Այսպիսով, վերոգրյալից պարզ է դառնում, որ վարչական մարմինն ի սկզբանե վարչական վարույթն իրականացրել է օրենքի կոպիտ խախտումներով:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն անփաստաթուղթ ապրանքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքը ձեռք բերող հարկ վճարողի նկատմամբ չի կիրառվում, եթե օրենքով սահմանված կարգով խախտումն արձանագրվելու ժամանակ հիմնավորվում է այլ հարկ վճարողից ձեռք բերվելու և ուղեկցող փաստաթուղթ չտրամադրվելու հանգամանքը: Սույն պարբերությունում նշված դեպքերում տուգանքը կիրառվում է անփաստաթուղթ ապրանք վաճառող հարկ վճարողի նկատմամբ: Սույն գործի շրջանակներում վարչական մարմինը որևէ գործողություն չի իրականացրել պարզելու համար, թե ումից են ձեռք բերվել ապրանքները և արդյոք վերջինս տրամադրել է Ընկերությանը ուղեկցող փաստաթղթեր, թե ոչ, ինչն էական նշանակություն ունի սույն գործի լուծման համար: Սույն գործով չէր կարող վերջնական վարչական վարույթն ավարտվել, եթե վերոգրյալ հանգամանքը վարչական մարմինը չի պարզել:

Ակտ կայացնելիս վարչական մարմինը որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույցով չի հիմնավորել իր փաստարկները և ակտում նշված փաստական հանգամանքները ու վարչական ակտի հիմքում դրվել է միայն Ընկերության աշխատակից չհանդիսացող անձի հայտարարությունը, ինչպես նաև ինչ-որ փոխադարձ հաշվարկների վերաբերյալ փաստաթուղթ, որն իրականում գոյություն չունի և դրանք իրականում որևէ նշանակություն չեն կարող ունենալ սույն գործի լուծման, ինչպես նաև որոշակի փաստեր հաստատելու առումով: Ուսումնասիրելով և վերլուծելով վերոգրյալ բոլոր փաստական հանգամանքները, ահնաժեշտ է փաստել, որ ակտում արձանագրված այն հանգամանքը, որ համաձայն Ընկերության կողմից անփաստաթուղթ տեղափոխված ապրանքների գծով չի տիրապետում հաշվապահական հաշվառման սահմանված փաստաթղթերը, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, ապա «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային մարմինը ՀՀ կառավարության 1998 թ-ի սեպտեմբերի 18-ի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգով: Այնինչ, վարչական մարմինը հիմք ընդունելով Ընկերության աշխատակից չհամարվող անձի հայտարարությունը, վերոգրյալ ապրանքների արժեքների վերաբերյալ տրված տվյալները կիրառել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված տուգանք՝ 1.869.000 դրամ:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրությամբ կարելի է հանգել այն եզրակացության, որ ըստ էության ընկերության հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկվել են ՀՀ կառավարության 1998 թ-ի սեպտեմբերի 18-ի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի դ) ենթակետով սահմանված դրույթների պահանջների չպահպանմամբ, այլ ընդամենը հիմք են ընդունվել Ընկերության աշխատակից չհամարվող անձի հայտարարությունը, որոնց հանրագումարի նկատմամբ կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված տուգանքը:

Վարչական մարմինը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի և 57-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

Հատկապես կարևոր էր պարզել, թե ումից են ձեռք բերվել ապրանքները և արդյոք Ընկերությանը տրամադրվել են ուղեկցող փաստաթղթեր, թե ոչ, քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի վերջին պարբերության մեջ հստակ սահմանված է դրա վերաբերյալ դրույթներ, և բնականաբար այդ հոդվածով սահմանված հիմնավորումը պետք է իրականացնի վարչական մարմինը, հաշվի առնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հ օրենքի դրույթներով՝ ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել և վերացնել 26.09.2014 թ-ին կազմված թիվ 1426474 վարչական ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ ՕՀ և ՆԱԳՎ ՕՀՎ 26.09.2014 թ-ի թիվ 1426474 վարչական ակտում մասնավորապես արձանագրվել է, որ 2014 թ-ի սեպտեմբերի 22-ին ժամը 12:05-ի սահմաններում ք.Երևան, Արին Բերդի նրբանցքում իրականացվել է «Հ.Ա.Ն.Ս. ՖՈՒԴ» ՍՊԸ-ին պատկանող «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 22 LO 899 պետհամարանիշի ավտոմեքենայում առկա իրերի և փաստաթղթերի հետազոտում: Իրականացված միջոցառման արդյունքում պարզվել է, որ ավտոմեքենայում առկա է 3000 կգ հավի բուր, ընդհանուր գումարով՝ 1.869.000 դրամի: Ըստ ընկերության ներկայացուցիչ, տնօրենի եղբայր Ն.Սարգսյանի գրավոր հայտարարության, նշված ապրանքատեսակը ք.Երևան, Վարդաշեն 6 փող., 14/12 հասցեում գտնվող ընկերության պահեստից տեղափոխվում էր ք.Երևան, Արին Բերդի նրբանցք առանց ուղեկցող փաստաթղթերի: Տեղափոխվող ապրանքի վաճառքի գինը որոշվել է երկկողմանի հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված գներով: Արդյունքում, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված 4-ի դրույթները խախտելու համար վարչական ակտով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 1.869.000 դրամ:

Նշվեց նաև, որ «Հ.Ա.Ն.Ս. ՖՈՒԴ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև ընկերություն) պատկանող «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 22 LO 899 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդ Գարիկ Կոստանյանը և ուղեկցող Նարեկ Սարգսյանը ՀՀ ՖՆ ՕՀ և ՆԱԳՎ ՕՀՎ 13-րդ բաժնի աշխատակիցներին տվել են գրավոր հայտարարություն, որի վերաբերյալ 22.09.2014 թ-ին կազմվել է արձանագրություն: Մասնավորապես, «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 22 LO 899 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդ Գարիկ Կոստանյանը հայտնել է, որ ավտոմեքենայում առկա է 200 տուփ հավի բուր և յուրաքանչյուր տուփի քաշը կազմում է 15 կգ (ընդամենը 3000 կգ), որը տեղափոխվում է առանց համապատասխան ուղեկցող փաստաթղթի:

Նարեկ Սարգսյանը նույնպես նշել է, որ «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 22 LO 899 պետհամարանիշի ավտոմեքենայում առկա է «Հ.Ա.Ն.Ս. ՖՈՒԴ» ՍՊԸ-ին պատկանող 3000 կգ հավի բուր, որի համար առկա չէ ուղեկցող փաստաթուղթ: Նարեկ Սարգսյանը նշել է նաև, որ վերոգրյալ ապրանքի համար ուղեկցող փաստաթուղթը բերելու է հաջորդ մեքենան:

Նարեկ Սարգսյանը 22.09.2014 թ-ին տվել է նաև մեկ այլ գրավոր հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն), որում մասնավորապես նշել է, որ «Հ.Ա.Ն.Ս. ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հիմնադիրը հանդիսանում է իր եղբայրը, և քանի որ վերջինս ժամանակավորապես բացակայում է ՀՀ տարածքից Ն.Սարգսյանն իր փոխարեն զբաղվում է ընկերության կազմակերպչական աշխատանքներով:

Ըստ Հայտարարության, ս.թ. սեպտեմբերի 22-ին ժամը 12:05 սահմաններում «Հ.Ա.Ն.Ս. ՖՈՒԴ» ՍՊԸ-ին պատկանող «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 22 LO 899 պետհամարանիշի ավտոմեքենան բեռնված 3000 կգ կշռով հավի բուրով, 1 կգ 623 դրամ, ուղևորվել է դեպի ք.Երևան, Արին Բերդի նրբանցք հասցե, որտեղ գտնվում է ՀՀ պաշտպանության նախարարության բազան: Նշված քանակության ապրանքը բեռնվել է «Հ.Ա.Ն.Ս. ՖՈՒԴ» ՍՊԸ-ի պահեստից, որը գտնվում է Վարդաշեն 6-րդ փողոցի 14/12 հասցեում: Հայտարարությունում նշված է նաև, որ պահեստից դուրս գալու ժամանակ վարորդ-առաքիչին չի տրամադրվել հարկային հաշիվ, քանի որ պայմանավորվածության համաձայն

սննդամթերքն ընդունում է ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան հանձնաժողովը, որն ապրանքի վերաբերյալ տալիս է եզրակացություն, որից հետո միայն այն հանձնվում է պահեստ: Հայտարարության համաձայն բազա հանձնված 3000 կգ հավի բոլի համար 22.09.2014 թ-ին ժամը 16:13-ին լրացվել է թիվ 9106730974 հարկային հաշիվը:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ հայտնաբերվել է 3000 կիլոգրամ հավի բուդ, սակայն չի նշվել, թե ինչ հիմքով է տվյալ քանակն արձանագրվել, առկա չէ որևէ փաստաթուղթ, որը կփաստի այդ հանգամանքը, նշվեց հետևյալը:

«Հ.Ա.Ն.Ս. ՖՈՒԴ» ՍՊԸ-ին պատկանող «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 22 LO 899 պետհամարանիշի ավտոմեքենայում 3000 կգ հավի բուդ առկա լինելու հանգամանքը հաստատել են տվյալ բեռը տեղափոխող վարորդ-առաքիչը և բեռն ուղեկցող անձը: Մասնավորապես, ավտոմեքենայում առկա է եղել 20 արկղ և յուրաքանչյուր արկղի քաշը կազմել է 15 կգ: Բացի այդ, տեղափոխվող հավի բոլի քաշը 3000 կգ կազմելու հանգամանքը հիմնավորվել նաև է ՕՀՎ աշխատակիցների կողմից իրականացված գննության արդյունքում: Ինչ վերաբերվում է գանգատաբերի պնդմանը, որ առկա չէ որևէ փաստաթուղթ, որը կփաստեր ավտոմեքենայում 3000 կգ հավի բուդ առկա լինելու հանգամանքը, ապա նշվեց, որ ՕՀՎ աշխատակիցների կողմից արձանագրված խախտումը ևս վկայում է տեղափոխվող ապրանքների թե քաշի և թե այլ տվյալների վերաբերյալ համապատասխան փաստաթղթի բացակայության փաստը: Այսինքն, ուղեկցող փաստաթղթի առկայության դեպքում դրանում առկա կլինեին տեղափոխվող ապրանքների վերաբերյալ անհրաժեշտ բոլոր տվյալները:

Գանգատում բերված հաջորդ պնդումների վերաբերյալ, որ բացակայում է որևէ փաստաթուղթ, որը կհիմնավորեր վերոգրյալ ապրանքի վաճառքի գինը, նշվեց, որ տեղափոխվող ապրանքի գինը որոշվել է հիմք ընդունելով վարորդ-առաքիչի և բեռն ուղեկցող անձի հայտարարություններում նշված տվյալները, ինչպես նաև ՀՀ ՖՆ տեղեկատվական բազայում ընկերության կողմից իրացվող նույնանման ապրանքատեսակի իրացման գների վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պնդումներին, որ կարևոր էր պարզել, թե ումից են ձեռք բերվել ապրանքները և արդյոք ընկերությանը տրամադրվել են ուղեկցող փաստաթղթեր, թե ոչ, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ քննարկվող դեպքում խոսքը գնում է ոչ թե ինչ որ անձից ձեռք բերված ապրանքները տեղափոխվելու կամ առաքվելու մասին, այլ ընդամենը տեղի է ունեցել ընկերության պահեստում առկա ապրանքների տեղափոխում, որն իրականացվել է առանց համապատասխան ուղեկցող փաստաթղթի առկայության:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ապացուցվել է ընկերության կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված 4-ի դրույթները խախտվելու հանգամանքը, ինչը և հիմք է հանդիսացել նույն օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ ՕՀ և ՆԱԳՎ ՕՀՎ 26.09.2014 թ-ի թիվ 1426474 վարչական ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ